ԳԵՐՄԱՆԵՐԵՆ

9-րդ դասարանի ավարտական քննությունների ուղեցույց

ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Հ/Հ	Առաջադրանքները ըստ ներկայացման ձևի	Ենթաառաջադրանքների քանակը	Առավելագույն միավորը
1	Ընտրովի պատասխանով	20	20
2	Կարճ պատասխանով	16	16
3	Ընդարձակ պատասխանով	1	4
	Ընդամենը	37	40

ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՆՅՈՒԹԸ

1. Բառապաշար
2. Բառակազմություն
3. Ձևաբանություն
4. Շարահյուսություն
5. Թարգմանություն
6. Կապակցված խոսք գրելու հմտություն

ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Թեստը բաղկացած է 9 առաջադրանքից (37 ենթաառաջադրանք):

1-4-րդ առաջադրանքները (20 ենթաառաջադրանք) ընտրովի պատասխանով առաջադրանքներ են: Տրված 4 պատասխանից պետք է ընտրել մեկը և «X» նշանով նշել ձևաթղթում: Ընտրովի պատասխաններով ենթաառաջադրանքների յուրաքանչյուր ճիշտ պատասխանին տրվում է 1 միավոր:

Առաջին առաջադրանքում տրված է տեքստ և դրա վերաբերյալ 5 ենթաառաջադրանք:

Երկրորդ առաջադրանքը կազմված է 8 նախադասությունից, որոնցում ստուգվում են քերականական տարբեր կարգերի վերաբերյալ սովորողի գիտելիքները:

Երրորդ առաջադրանքի միջոցով ստուգվում է սովորողի ճիշտ թարգմանելու կարողությունը:

Չորրորդ առաջադրանքը կազմված է 4 նախադասությունից: Տրված են նախադասությունների սկիզբը կամ վերջը: Պետք է տրված 4 տարբերակից ընտրել նախադասության սկիզբը կամ շարունակությունը՝ ուշադրություն դարձնելով տրված մասի իմաստին և քերականությանը:

5-8-րդ առաջադրանքները (16 ենթաառաջադրանք) կարճ պատասխան պահանջող առաջադրանքներ են: Պատասխանը պետք է անցկացնել ձևաթղթի մեջ: Կարճ պատասխան պահանջող առաջադրանքների յուրաքանչյուր ճիշտ պատասխանին տրվում է 1 միավոր:

Հինգերորդ առաջադրանքում տրված է 5 նախադասություն, որոնցից դուրս են բերված բայերը: Բայերը պետք է տեղադրել պահաջվող ժամանակաձևերով:

Վեցերորդ առաջադրանքը կազմված է 3 նախադասությունից: Այն հնարավորություն է տալիս ստուգելու քերականական տարբեր երևույթներ: Անհրաժեշտ է նախադասության մեջ գտնել ընդգծված բառերից ավելորդը:

Յոթերորդ առաջադրանքը կազմված է 4 բարդ նախադասությունից, որոնցում բաց է թողնված հարաբերական բառը: Պետք է համապատասխան հարաբերական բառը գրել ճիշտ հոլովով:

Ութերորդ առաջադրանքում տրված է 4 նախադասություն՝ ընդգծված բառերով: Ընդգծված բառերի համար պետք է գտնել համապատասխան հարցական բառը:

Իններորդ առաջադրանքը ընդարձակ պատասխան պահանջող առաջադրանք է: Առաջադրանքի կատարման համար տրվում է առավելագույնը 4 միավոր: Առաջադրանքում տրված 10 բառերից առնվազն 7-ով պետք է կազմել կապակցված տեքստ (5-7 նախադասություն):

Այս առաջադրանքը գնահատվում է հետևյալ չափանիշներով:

1. *Բառապաշար.* եթե բառիմաստները ճիշտ են արտահայտվել և կա բառիմաստի ոչ ավելի, քան 1-2 սխալ՝ տրվում է 1 միավոր: 3 և ավելի սխալի դեպքում միավոր չի տրվում:
2. *Ձևաբանություն.* եթե նախադասությունները ձևաբանորեն ճիշտ են և կա ձևաբանական ոչ ավելի, քան 2 սխալ՝ տրվում է 1 միավոր: Ձևաբանական 3 և ավելի սխալի դեպքում միավոր չի տրվում:
3. *Շարահյուսություն.* եթե նախադասությունների շարահյուսությունը ճիշտ է և կա շարահյուսական ոչ ավելի, քան 2 սխալ՝ տրվում է 1 միավոր: Շարահյուսական 3 և ավելի սխալի դեպքում միավոր չի տրվում:
4. *Ուղղագրություն.* ճիշտ ուղղագրության և մինչև 5 ուղղագրական սխալի դեպքում տրվում է 1 միավոր: 6 և ավելի տառասխալի դեպքում միավոր չի տրվում:

Կապակցված խոսքը չի գնահատվում, եթե՝

- խոսքը չունի ամփոփ, ավարտուն տեսք, սկիզբ, միջին մաս, ավարտ,
- նախադասությունների քանակը 5-ից պակաս է,
- գործածված չեն տրված բառերից առնվազն 7-ը:
-

Ձևաթղթում տրված է սխալ նշված պատասխանը ուղղելու երեք հնարավորություն, երկուսը՝ ընտրովի պատասխանով առաջադրանքների համար, մեկը՝ կարճ պատասխանով առաջադրանքների համար: Եթե որոշեք փոխել կարճ պատասխանով առաջադրանքի պատասխանը, ապա «**Սխալ նշված պատասխանները փոխելու տեղ**» դաշտում գրեք առաջադրանքի համարը և «X» նշանը դրեք ճիշտ վանդակում:

Ամփոփիչ վերջնական միավորը ստացվում է լուծված առաջադրանքների միավորների գումարից (առավելագույնը 40 միավոր, դրական են համարվում 12 և ավելի միավորները), որը համապատասխանեցվում է գնահատման 10 միավորանոց համակարգին՝ համաձայն հետևյալ սանդղակի.

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ

ՄԻԱՎՈՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏԱԿԱՆ
0-3	1
4-7	2
8-11	3
12-16	4
17-21	5
22-26	6
27-33	7
34-37	8
38-39	9
40	10